ՇՈՂԵՐ ՊՅՈՏՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

ՄԻԳՐԱՑԻՈՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ՄԵՂՄԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Տեղանքի (բնակավայրի) փոփոխության ձգտումը հանդիսանում է մարդու հիմնական յուրահատուկ բնութագրերից մեկը: Ավելի քան կես դար առաջ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ընդունման համաձայն տեղաշարժման ազատության իրավունքը ստացել է միջազգային ճանաչում[1]: Այդ հռչակագրի 13-րդ հոդվածում նշված է. «Յուրաքանչյուր անհատ ունի ազատ տեղաշարժման և իր համար բնակության ընտրության իրավունք՝ ամեն պետության սահմաններում» և «Յուրաքանչյուր անհատ իրավունք ունի ցանկացած երկիր լքելու (ներառյալ իր սեփականը) և իր երկիր վերադառնալու»: Շատ երկրների կառավարություններ սկսեցին գիտակցել, որ ժամանակակից միգրացիան առաջադրում է արդիական խնդիրներ կապված միգրանտների և տեղաբնակների նույնականացման նոր տարբերակների վերաբերյալ: Միգրացիան հանդես է գալիս մարդկանց ինքնակազմակերպման ձևերից մեկը և ներառում է միգրացիոն ինստիտուտների համակարգերը, նորմերը, կապերը և ցանցերը: Միգրացիան մի կողմից կարող է դրսևորվել որպես սոցիալ արդյունավետ երևույթ, մյուս կողմից կրում է հասարակական հարաբերությունների էական խնդիր: 1951թ. ստեղծվեց Միգրացիայի միջազգային կազմակերպությունը, որի կանոնադրության մեջ նշված է, որ միգրացիոն գործընթացները կապված են տնտեսական, սոցիալ մշակութային զարգացման, ինչպես նաև մարդկանց ազատ տեղաշարժման իրավունքի հետ: Նշենք, որ միգրացիայի օբյեկտ հանդես են գալիս ոչ միայն տարածքները, որքան սոցիալական տարածությունները, որոնք պոտենցիալ կարող են ներկայացնել ավելի լայն հնարավորություններ միգրացիայի սուբյեկտին, որպես այդպիսիք հանդես են գալիս անհատը, խումբը և մարդկանց հոսքը (անտրոհոսքը): Ժամանակակից փուլում ամեն ոք կարող է հայտնվել միգրանտի տեղում, դրա համար էլ սոցիալ-տնտեսական շարժունակությունը դառնում է ժամանակակից անհատի կենսակերպ:

2011թ. Հայաստանի և ԵՄ միջև ստորագրվեց շարժունակության շուրջ գործընկերության հռչակագիրը: Համատեղ հռչակագիրը նախանշում է առավել բարձր մակարդակի երկխոսության և համագործակցության չորս ոլորտ՝

- շարժունակություն, օրինական միգրացիա և ինտեգրում,
- միգրացիա և զարգացում,
- անօրինական ներգաղթի և մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքար, հետընդունում (ռեադմիսիա), ինքնությունը հաստատող և ճամփորդական փաստաթղթերի անվտանգություն, սահմանների կառավարում,
- ապաստան և միջազգային պաշտպանություն[2]:

Միգրանտի շարժունակությունը կախված է ինչպես ծագման այնպես էլ նպատակակետ երկրներից: Միգրացիան կարող է փոփոխություն մտցնել միգրանտի կարգավիճակում: Այն կարող է նպաստել սոցիալական սանդուղքով միգրանտի վեր բարձրանալուն, այնպես էլ խոչընդոտում է: Որպես ազդող գործոն կարող է հանդես գալ նպատակակետ երկրում միգրանտների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ օրենքների բացակայությունը, ինչը խոչընդոտ է հանդիսանում մեր միգրանտների համար սոցիալական կարգավիճակի բարելավման տեսանկյունից, այլ խոսքերով ասած, բացակայում է վերընթաց շարժունակությունը: Հայ միգրանտները շատ հաճախ ներգրավվում են ժամանակավոր միգրացիոն գործընթացներում՝ տեղափոխվելով մեկ այլ երկիր և փնտրելով ցածր որակավորմամբ աշխատանք մինչ ՀՀ վերադարձը (կախված վիզայի ժամկետից):

Աշխատանքային միգրացիան ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական հետևանքներ.

Դրական հետևանքներից են՝

- գործազրկության մեղմումը, շնորհիվ միգրացիոն հոսքի ելքի երկրում գործազրկության մակարդակը նվազում է,
- իրենց երկրի տնտեսության մեջ էմիգրանտների ներդրումը (շատ էմիգրանտներ, որոնք լավ կայացել են արտերկրում, ներդրում են իրենց ստացած միջոցները իրենց պետության գործունեությունում),

[1] Մարդու իրավունքի համընդհանուր դեկլարացիա// Ռեզոլուցիա 217 A, ՄԱԿ-ի Գլխավոր Ասաբլեա, 10 դեկտեմբեր 1948թ.:

[2] «ՀՀ-ում միգրացիայի կառավարման ոլորտում զարգացումների ակնարկ», Երևան, 2014, էջ 6:

- էմիգրանտի մեկնելուց հետո սոցիալական ծախսերի կրճատումը՝ կախված էմիգրանտի բացակայության տևողությունից (կրթության, անվտանգության, բուժ. ծառայության ծախսերը)։ Բացասական հետևանքներին կարելի է դասել.
- բարձր որակավորում ունեցող կադրերի հոսքը կամ «ուղեղների» արտահոսքը,
- դրամական փոխանցումների կորուստը այլ երկիր (որքան շատ էմիգրանտ է երկրում, որտեղ նրանք աշխատում են, այնտեղ ավելի շատ է դրամական միջոցների հոսքը այլ երկիր),
- ստացված դրամական եկամուտները հարկագանձումից թաքցնելու ձգտումը։

Ներկայումս դիտվող միգրացիոն հոսքերը ամբողջ աշխարհում խնդիրներ են առաջ բերում, այսպես ասած, կենսաթոշակային համակարգերի «ծանրաբեռնվածության» հետ կապված։ Միգրանտները շատ հաճախ կանգնում են սոցիալական ապահովության իրավունքի սահմանափակումների առաջ մուտքի և ծագման երկրի ազգային օրենսդրության երկու սկզբունքների պատճառով՝ տարածքայնության և ազգության։ Միգրացիայի պարագայում, այն ենթադրում է սոցիալական ապահովության նպաստներն արտերկիր արտահանելու անհնարինություն, իսկ ծագման երկիր վերադառնալիս դրանց կորուստը։ Շատ երկրներում նախատեսված չէ նպաստներ (այդ թվում գործազրկության) վճարել արտասահմանում բնակվող աշխատանքային միգրանտներին. որոշ դեպքերում միայն քաղաքացիներն իրավունք ունեն արտահանել նպաստները, իսկ այլ դեպքերում ընդհանրապես սահմանափակվում է նպաստների արտահանումը։ Մի շարք երկրների ազգային օրենսդրությունը նախատեսում է երկիրը լքող անձանց միանվագ գումարի տրամադրում, այլ ոչ թե կենսաթոշակ[1]։ Ժողովրդագրական փոփոխությունները, միգրացիոն հոսքերի մեծացումը, արտագաղթը անհրաժեշտություն են առաջացնում միասնական աշխատաշուկայի (որն արդեն ԵՏՄ տարածքում ձևավորվել է) և կենսաթոշակային տարածքի ստեղծման։

Կարևոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ միգրացիայի տարբեր ձևերից կախված (հիմնականում շրջանառու և ժամանակավոր) երկիրը ենթարկվում է որոշակի ազդեցության՝ զարգացման առումով, որն արտահայտվում է տնտեսությունում ավելի շատ կամ արդյունավետ գումարներ ներդնելու մեջ։ Դժվար է ասել, թե որ միգրացիան է տվյալ դեպքում առավել արդյունավետ մեր երկրի համար։

Աղյուսակ 1

ԱՊՀ և ՀՀ հարևան երկրների դիրքերն ըստ Գլոբալ մրցունակության ինդեքսի աշխատաշուկայի արդյունավետության գործոնների2

Գործոններ	Հայաստան	Վրաստան	Իրան	Թուրքիա	Ադրբեջան	Ղազախստան	Ղրղզստան	Մոլդովա	Ռուսաստան	Տաջիկստան	Ուկրաինա
Համագործակցություն աշխատուժ-գործատու հարաբերություններում	44	76	119	123	47	78	69	107	125	77	109
Աշխատավարձի որոշման էլաստիկություն	43	34	131	54	20	31	3	30	83	51	59
Զբաղվածության ցուցանիշի կոշտություն	52	10	79	90	19	39	44	108	94	123	82
Աշխատանքի ընդունման և հեռացման փորձ	18	10	88	63	5	34	14	103	85	42	17
Ավելցուկային ծախսեր	21	6	112	124	42	16	29	76	29	62	21
Վճարում և արտադրողականություն	41	57	118	75	33	18	9	48	61	24	42
Պրոֆեսիոնալ մենեջմենթ	107	85	124	80	105	116	106	98	112	129	131
Ուղեղների արտահոսք	103	102	107	97	78	88	137	134	98	85	125
Աշխատուժում տղամարդկանց և կանանց հարաբերակցություն	51	75	129	133	17	19	90	11	18	80	40
Գլոբալ մրցունակության ինդեքս	**92**	**88**	**62**	**59**	**55**	**72**	**126**	**93**	**66**	**105**	**82**

[1] Կուլկե Ու., Միգրանտ աշխատողների համար սոցիալական ապահովության բացը լրացնելու ԱՄԿ ռազմավարություն, հատոր 2, 2007թ., էջ 457-459։

[2] The Global Comprtitiveness Report 2013-2014.

Արդյունավետ աշխատաշուկա և տնտեսություն ունենալու համար բավարար չէ ունենալ զբաղվածության բարձր մակարդակ, անհրաժեշտ պայման է ունենալ աշխատանքի բարձր արտադրողականություն: Գլոբալ մրցունակության ինդեքսով Հայաստանը 92-րդն է, ընդ որում՝ աշխատաշուկայի արդյունավետությամբ 34-րդն է 142 երկրների շարքում: Աղյուսակում բերված են ըստ Գլոբալ մրցունակության ինդեքսի ԱՊՀ և Հայաստանի հարևան երկրների աշխատաշուկաներն արդյունավետության իրենց բոլոր գործոններով:

Աղյուսակից երևում է, որ ՀՀ հիմնական խնդիրները կապված են պրոֆեսիոնալ մենեջմենթի բացակայության և ուղեղների արտահոսքի հետ: Ուղեղների արտահոսքը կարող է դրական ազդեցություն ունենալ մեկնման երկրի մարդկային կապիտալի մակարդակի վրա: Վերլուծությունները վկայում են, որ աղքատ երկրներում կրթության ցածր հատույցի պատճառով կրթություն ստանալու խթանները շատ թույլ են: Եվ երբ հնարավորություն է առաջանում արտագաղթել զարգացած երկիր, որտեղ կրթության հատույցը համեմատաբար բարձր է, առավել մեծ թվով մարդ է սկսում ձգտել կրթություն ստանալ: Արդյունքում աղքատ երկրում մարդկային կապիտալի մակարդակը աստիճանաբար աճում է: Դրա հետ մեկտեղ մեծանում է նաև որակավորված կադրերին հայրենիքում աշխատանքով ապահովելու հնարավորությունը[1]: Սակայն նույնը չի կարելի ասել ՀՀ-ի համար, քանի որ մեր պարագայում ուղեղների արտահոսքը գլխավորապես կապիտալ է ստեղծում այլ երկրում, քանի որ բանվորական ներուժի հետ մեկտեղ մեկնում են բարձր որակավորում ունեցող կադրեր, ոչ թե կրթություն ստանալու, այլ հենց իրենց գիտելիքն են կիրառում այլ երկրում:

Խնդիրը նրանում է, որ միգրացիան պայմանավորված է ոչ կրթության որակով, այլ սոցիալ-տնտեսական վիճակով: Գոյություն ունի ստացած կրթությանը համարժեք աշխատատեղ գտնելու խնդիր, աշխատաշուկայի պահանջարկն էապես շեղված է երիտասարդ մասնագետ կադրերի առաջարկից, համակարգի շրջանավարտները մասնագիտությամբ չեն կարողանում աշխատել: Կրթությունը հստակ այն ոլորտն է, որը ազդեցություն ունի նպատակակետ երկրներում միգրանտների կողմից կատարվող աշխատանքի տեսակի և ստացված աշխատավարձի վրա: Շատ կարևոր հանգամանք է, որպեսզի արտերկրում և ՀՀ-ում միգրանտին ցուցաբերվող աջակցությունը լինի համակցված, հատկապես կապված աշխատաշուկայի վերաբերյալ տեղեկատվության հասանելիության, բնակարանային պայմաններից օգտվելու հնարավորությունների, անձնական ապահովագրման, ինչպես նաև կրթության և որակավորման հետ: Համաձայն «Հայաստանում միգրացիայի վերաբերյալ տնային տնտեսությունների հետազոտության մասին» զեկույցի հարցման արդյունքների 44% դեպքերում հարցվածներն իրենց աշխատանքը գտել են հյուրընկալող երկրում գտնվող ծանոթների և միջնորդների միջոցով, 19.6% դեպքերում՝ Հայաստանում գտնվող ծանոթների կամ միջնորդների միջոցով, 13.1% դեպքերում՝ օտարերկրյա գործատուի միջոցով, 4.2% դեպքերում՝ Հայաստանում բրիգադների միջոցով, 2.7% դեպքերում՝ օտարերկրյա գործակալության միջոցով, 2.3%-ը՝ սեփական կամ ընտանեկան բիզնես է ունեցել արտերկրում,1.3%-ը՝ ինտերնետով, 1.1% դեպքերում՝ օտարերկրյա գործակալության միջոցով և միայն մեկ անձ է աշխատանք գտել ՀՀ զբաղվածության պետական ծառայության միջոցով[2]: Անհրաժեշտ է որպեսզի վերջինս առավել մեծ ուշադրություն դարձնի հայ միգրանտներին հյուրընկալ երկրում աշխատանքի տեղավորման խնդրի լուծմանը, ինչն ավելի կնպաստի սեփական պետության հանդեպ միգրանտի վստահության ավելացմանը:

2010-2014թթ. ընթացքում բավականին մեծ թիվ են կազմում միգրացիայի մնացորդները (աղյուսակ 2): Այն համեմատաբար քիչ է եղել 2012թ. -9400 մարդ, սակայն աստիճանաբար գնալով այդ ցուցանիշը մեծանում է: Գնացածների միայն մի մասն է վերադառնում Հայաստան, և միգրացիայի սալդոն կրճատվելու փոխարեն մեծանում է: Ըստ 2-րդ աղյուսակի, վերջին երեք տարիների ընթացքում Հայաստանից հեռացել է մոտ 56 հազար մարդ, սակայն պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը այդ նույն տարիներին գրեթե չի նվազել (2012թ.՝ 65 հազ. մարդ, 2013թ.՝ 58.6 հազ մարդ, 2014թ.՝ 62.1 հազ մարդ[3]):

---

[1] Дмитрия Веселов, Ольга Норкина, “Миграция и координационная ловушка бедности в модели с двумя регионами”, изд. “Высшая школа экономики”, М., 2012, стр. 4-6.

[2] «Հայաստանում միգրացիայի վերաբերյալ տնային տնտեսությունների հետազոտության մասին» զեկույց, Երևան, 2014, էջ 110:

[3] ԱՎԾ,Հայաստանը թվերով, Երևան, 2015, էջ 26:

Աղյուսակ 2

ՀՀ ժամանումներն ու մեկնումները 2010-2014թթ.[1]

	2010թ.	**2011թ.**	**2012թ.**	**2013թ.**	**2014թ.**
ժամանել են	32 500	30 900	29 300	19 800	17 400
մեկնել են	69 800	59 400	38 700	44 200	39 200
միգրացիայի մնացորդը	**-37 300**	**-28 500**	**-9400**	**-24400**	**-21 800**

Ստացվում է, որ 2012-2014թթ. ընթացքում Հայաստանից արտագաղթել է մոտ 56 հազար մարդ, սակայն գործազուրկների թիվը կրճատվել է երեք հազարով: Սա խոսում է այն մասին, որ Հայաստանից գնում են ոչ միայն գործազուրկները, այլև աշխատանք ունեցող մարդիկ: Ի դեպ, այս պնդումն ապացուցվում է Քոլոյան հիմնադրամի (Կանադա) կողմից ներկայացված հետազոտության արդյունքներով: Ըստ որի արտագաղթի հիմքում միայն տնտեսական պատճառները չեն: Հարցումները և ֆոկուս խմբերի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հարցվածների եկամուտների աճին զուգահեռ՝ աճում են նրանց արտագաղթելու մտադրությունները: Այլ կերպ ասած, որքան աճում է ընտանիքների եկամուտը, այնքան շատ են նրանք մտածում արտագաղթելու մասին[2]: Հարցվածների կողմից նշված պատճառներից են տնտեսական, իրավական և այլ ոլորտներին առնչվող հիմնախնդիրներ, որոնք հիմնականում վերաբերում են աշխատատեղերի բացակայությանը, մարդու իրավունքների պաշտպանությանը, բիզնես իրականացնելու համար ոչ հավասար պայմանների, մենաշնորհների առկայությանը, ինչպես նաև օրենքի իշխանության հետ կապված հարցերին:

Այսպիսով, նշված հիմնախնդիրների արդյունքում ձևավորվում է մի մթնոլորտ, որտեղ մարդիկ չեն տեսնում իրենց ընտանիքների և երեխաների համար հուսալի ապագա: Քաղաքացիները փորձում են իրենց բողոքն արտահայտել հիմնականում արտագաղթի տեսքով:

Հետևաբար՝ այս շարժումը մեղմելու համար անհրաժեշտ է միգրացիոն քաղաքականության հիմքում դնել ժողովրդագրական վիճակի կարգավորման պետական նոր ծրագրերի մշակում: Վերջին երեք տարիներին գնալով ավելացել է նաև հարկերի փաստացի հավաքագրումը, դրան հակառակ աճել է միգրացիայի սալդոն: Ստացվում է, որ բնակչությունը նվազում է, իսկ միջին հարկային բեռը ամեն մի քաղաքացու հաշվով ավելանում է: Եվ նման պայմաններում մնացողների համար դժվարանում է ուսերին կրել այդ բեռը, իսկ մեկնողների համար արդեն միևնույնն է, և իզուր չէ, որ արտագաղթի «ալիքը» գնալով մեծանում է: Պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ միգրացիայի աճին նպաստում է նաև այն, որ Հայաստանը ելք չունի դեպի ծով և առևտուր իրականացնելու համար ունի ընդամենը երկու բաց սահման, հետևապես արդյունաբերությունը զարգացնելու հնարավորությունները ցածր են: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել փոքր հզորությունների զարգացմանը: Ագրարային քաղաքականության ճիշտ ուղղվածության շնորհիվ կարող է նվազեցվել գործազրկությունը, միաժամանակ բարձրացնելով զբաղվածությունը գյուղական վայրերում, քանի որ արտագաղթի հոսքը հենց գյուղական համայնքներից է. դրա վառ ապացույցը ներկայիս դատարկված գյուղերն են: Միջազգային կազմակերպությունների աջակցության շնորհիվ գյուղացիական տնտեսությունները ներգրավված են այդ ծրագրերի մեջ, որի շնորհիվ գյուղացիների զբաղվածությունը ավելանում է: Ստեղծվել են խորհրդատվական ծառայություններ, որոնք խթանում են ժողովրդական արհեստները, վայրի հատապտուղների, դեղաբույսերի հավաքմանն ու փոքր ձեռնարկությունների զարգացմանը: Անհրաժեշտ է նպաստել պարենային ապահովվածության բարելավմանը, որի շնորհիվ կստեղծվեն նոր աշխատատեղեր: Տեղական արտադրողների շահերի պաշտպանությամբ կկայունացվեն երկրի իրացման շուկաները: Անհրաժեշտ է օգտագործել պետական և միջազգային դոնոր կազմակերպությունների համատեղ ջանքերը մարզերում ենթակառուցվածքների զարգացման, փոքր ձեռնարկությունների հզորացման, ֆինանսական աջակցության, վարկավորման համակարգի պարզեցման ուղղությամբ:

[1] ԱՎԾ, Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, Երևան, 2015, էջ 109:
[2] http://usarmnews.info/2013/10/21:

ՄԻԳՐԱՑԻՈՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ՄԵՂՄԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ՇՈՂԵՐ ՊՅՈՏՐԻ ՊՈՂՈՍՅԱՆ, *տ.գ.թ.*
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի գիտաշխատող

Համառոտագիր

Ժամանակակից աշխարհում միգրացիան հանդիսանում է մարդկանց ինքնակազմակերպման ձևերից մեկը և ներառում է միգրացիոն ինստիտուտների բարդ համակարգերը: Ներկայումս միգրացիոն հոսքերը գնալով ահագնացող բնույթ են կրում, և իզուր չէ, որ հոդվածում դիտարկվել են ներկա միգրացիոն վիճակը, ներկայացվել են հետազոտության արդյունքներ, որի հիման վրա վերլուծվել են ուղեղների արտահոսքի հետ կապված խնդիրներ, արվել են միգրացիայի շարժումը մեղմող առաջարկություններ:

Բանալի բառեր. *միգրացիա, շարժունակություն, միգրացիայի մնացորդ, աշխատավարձ, աշխատաշուկա, զործազրկություն, զբաղվածություն, ուղեղների արտահոսք, նպաստ, կրթություն:*

МИГРАЦИОННОЕ ДВИЖЕНИЕ И ПУТИ ЕГО СМЯГЧЕНИЯ В РА

ШОГЕР ПЕТРОВНА ПОГОСЯН, *к.э.н.*
научный сотрудник Института экономики им. М. Котаняна НАН РА

Аннотация

В современном мире миграция выступает одной из форм самоорганизации людей и включает в себя сложные системы миграционных институтов. В настоящее время миграционные потоки носят все более прогрессируюший характер, поэтому не случайно, что в статье рассмотрена современная миграционная ситуация, представлены результаты исследования, на основе которых проанализованы проблемы, связанные с «утечкой мозгов», внесены предложения по смягчению миграционного движения.

Ключевые слова: *миграция, мобильность, сальдо миграции, зарплата, рынок труда, безработица, занятость, утечка мозгов, пособие , образование.*

MIGRATION MOVEMENT AND APPROACHES TO MITIGATE IT IN THE REPUBLIC OF ARMENIA

SHOGHER PYOTR POGHOSYAN, *Ph.D. in Economics*
Research Associate, M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

In the contemporary world, migration is considered to be as one of the self-organizational forms of the people, which include complex systems of migration institutions. Currently, the migration flows have a tendency of a vehement growth. Therefore, it is not contingent that in this article we especially accentuated the current pattern of the migration and those research results which are presented based on the problems connected with brain drain. In addition, concrete proposals for reducing the movement of migration were put forward.

Keywords: *Migration, mobility, migration balance, salary, labor market, unemployment, employment, brain drain, welfare, education.*